

10.

Հայկական բարձրավանդակի բնական սահմանները*

ՀԱՅԿ ԱՍԱՏՐՅԱՆ

Հայկական Բարձրավանդակ և պատմական Հայաստան – միևնույն բաները չեն դրանք: Առաջինը զուտ բնաշխարհագրական ըմբռնում է, որով բնօրեն որոշ ու անփոփոխ, երկրորդը՝ պատմա-ազգագրական, որով ենթակա սեղմումի և ընդլայնումի, ինչպես ինքը՝ կյանքի հարափոփոխ հոլովույթը:

Անցյալում մեր քաղաքական կյանքն ու ուժն այնքան անկայուն և ելևէջային է եղել, որ այսօր դժվար է առանց վերապահումի մատնանշել պատմական Հայաստանի սահմանները: Ո՛չ միայն օտարներն են հաճախ քաղաքականապես մասնատել մեր երկիրը, այլև Հայոց պետական դրոշը մերթ իր ազդեցությունը ծավալելով (օրինակ՝ Տիգրան Մեծի ժամանակ), մերթ վասալային մանրատետույթունների խորհրդանշան դառնալով (Արշակունիների անկումից հետո), մերթ տարագրվելով (Կիլիկյան շրջան), մերթ իսպառ չքանալով՝ պատճառել է այլազան սահմանագծումներ: Շփոթիչ դեր է խաղում նաև հին պատմիչների՝ հայերի Թրակիայից դալու և որոշ մարդապատմաբանների՝ հայոց փոքրասիական ծագման տեսությունները, որոնցից հետևացվում է, թե մեր ազգի նախօրրանը Փոքր Հայքն է: Հները պատմական Հայաստան ասելով՝ ընդհանրապես հասկանում են Մեծ Հայքը և Փոքր Հայքը: Առաջինը մեր երկիրն ուսումնասիրող գերմանացի գիտնականների «Հայկական Բարձրավանդակ» անվանած աշխարհագրական միավորն է բնական Հայաստանը, որ ըստ մարդաբանական նորագույն տվյալների, հայ ցեղի և ազգություն կազմավորման բնական միջավայրն է, այսինքն՝ հայոց հավիտենական Հայրենիքը:

* «Տարոնի արժիվ», 1938թ., թիվ 3-4: Արտատպում ենք հետևյալ հրատարակությունից՝ Հայկ Ասատրյան. Արթնացի՛ր, հայ մարդ: Երևան, «Ազգայնական ակումբ», 1998 թ.:

Բնօրեն սահմանագծված այս բարձրավանդակն է Հայոց պատմության գլխավոր թատերավայրը, և դա է պատկերվում ու զգացվում իբր մեր ամբողջական Հայրենիքը՝ անկախ ազգագրական պայմաններից և ժամանակների քաղաքական սահմանագծումներից: Այս Հայրենիքում բռնումն արդյունք է ո՛չ միայն մեր ենթակայական տրամադրությունների, այլև՝ բնական գործոնների առարկայական անբարդարձումի: աշխարհագրորեն ամբողջական երկիրն է պարտադրում օրգանական Հայրենասիրություն, հայրենիքի հավիտենական զգացում, հայրենազգացություն: Արարատը սրբազան է բոլոր հայերի համար, որովհետև դա կենտրոնական բավիղն է Հայկական Բարձրավանդակը ձևացնող լեռների, բնական խորհրդանշանը Հայոց Հայրենիքի ամբողջականություն:

Այսօր Պարսկաստանն իր թաթարաբնակ Ատրպատականով երկարում է մինչև Արարատ: Թուրքիան, արդեն ոտքը դրած Արարատյան դաշտում, սպառնալից կերպով սեղմել է խորհրդային «բեկոր-Հայաստանը»: Արաքսի ձախ ափի որոշ կետերում ոռոս գինվորն է պահակում: Թուրքական քաղաքական դրոշի տակ՝ Հայկական Տավրոսն ազգագրորեն ստացել է զուտ քրդական նկարագիր: Հայկական Պարն ու Մաղկանցն օրըստօրե մերկանալով քրդությունից՝ նաև ազգագրորեն ստանում են թուրք-թաթարական կերպարանք: Հայկական Կովկասի այլևայլ մասերում աչքի են զարկում թաթարական ազդեցիկ գծեր: Մեծրանցը և՛ քաղաքականապես և՛ ազգագրապես ստացել է թուրքական դրոշմ: Մեր երկիրը կազմող հինգ լեռնագոտիներից չորսը անցել է թուրքերի ձեռքը, մեկը՝ վիճելի դարձել հայերի և թաթարների միջև: Թուրքերը տիրում են մեր բարձրավանդակի տարածություն 4/5-երորդականին, թաթարները և վրացիները՝ 1/10-երորդականին: Ազգագրորեն՝ Հայկական Բարձրավանդակը հագիվ իր 1/10-երորդականով պահում է հայկական կերպարան: Այս իրողությունները, որքան էլ նշանակալից Առաջավոր Ասիայի պատմության և մանավանդ Հայաստանի, հայ ազգի գոյություն, լինել-չլինելու կնճռի տեսակետով, այնուամենայնիվ, ի զօրու չեն Հայկական Բարձրավանդակի բնական միությունը պառակտել: Հայկական Բարձրավանդակը բնական մի միավոր է, աշխարհագրական անբաժանելի մի ամբողջականություն է:

Ճիշտ է նկատում աշխարհագիր էվալդ Բանդեն, թե «աշխար-

հազարական առանձին բնությամբ մի Քյուրդիստան գոյություն չունի», այսինքն՝ ոչ միայն այսր, այլև՝ անդրտիրիսյան լեռնաշխարհը պատկանում է Հայկական Բարձրավանդակին:

Հայաստանն իրանական և փոքրասիական ավելի ստորանիստ սարահարթների և Միջագետքի, Ասորիքի ու Կովկասի դաշտագետտինների միջև տարածված ամենակարկառուն բարձրավանդակն է:

Հանրաժանոթ է սահմանային այս ըմբռնումը, բայց շատ ընդհանուր, վերացական, իրական մանրամասնությունների մեջ՝ չբավարարող: Ո՞ւր են վերջանում Իրանը, Փոքր Ասիան, Կովկասը, Միջագետքը. որտեղի՞ց են սկսվում Հայկական Բարձրավանդակի բնական սահմանները: Անհրաժեշտ է այս մասին հստակ գաղափար կազմել: Կենսաբանորեն և գործնական քաղաքականություն տեսակետից ահագին նշանակություն ունի լիազգաց հայրենւմբռնումը: Դա ասել է՝ նպատակի առարկայական և ամբողջական դիմագծումը, դա ասել է՝ քաղաքական ուշադրություն և ձգտումների կենտրոնացում: Դա կարող է լույս սփռել էական այնպիսի հարցերի վրա, որպիսիք են.

- ա) ո՞րն է բուն մեր Հայրենիքը, որից դուրս այլ «օջախ»ներ որոնելը բանդագուշանք է միայն, անհայրենագգաց քաղաքաբանություն, անստեղծագործ դեգերում, ուշադրություն և կամքի ցրում, անկենսաբանական ցնորք:
- բ) կարո՞ղ է ներկա խորհրդային Հայաստանը գոյության հավատ և մանավանդ վտանգի ժամանակ ինքնապաշտպանվելու հույս ներշնչել:
- գ) հնարավո՞ր է Հայաստանից դուրս հոգևոր հայրենիք ստեղծել, անհող պետություն:
- դ) բնական ինչպիսի՞ սահմաններում հայերը կարող են իբրև ազգություն և պետություն օրգանապես զարգանալ, այսինքն՝ տնտեսապես, քաղաքականապես, ռազմագիտորեն հարաբերաբար ապահով դիրք նվաճել:

Հայը նախ ազգակիցներ չունեցող ժողովուրդ է: Եվ հենց դրա համար էլ նա սովորականից ավելի կարիք ունի երկու բանի — ցեղային ներկարողական ուժերի հարատև լարումի և բնօրեն ամբողջական հայրենիքի:

Աշխարհագրորեն ամբողջական որևէ միջավայրի սահմաննե-

ըը ճշտորոշող հիմնական գործոններն են երկրաբանական կազմը, լեռնա և ջրագրական դրուվությունը, կլիմայական, կենդանական և բուսական առանձնահատկությունները:

Հայկական Բարձրավանդակն իր սեպորեն իջնող կողերով, իր արտակարգորեն ցնցված և քառասային երկրաբանական խավերով, խստորեն կտրտված և բարձրակարկառ լեռնագոտիներով, մերթ հանգուցավոր, մերթ միազանգ հրաբխային վիթխարի կոներով, բացառապես հրաբխային ծագման լճային ցանցով, իր բարձրավանդակային գետերի անմիապաղաղ, առավելապես կատաղընթաց հոսանքով, աստիճանաբար դեպի արևելք կամ արևմուտք խոնարհվող ներքին հովիտներով, դեպի հյուսիս կամ հարավ երկարող կիրճերով և եզերական դաշտերով, իր կլիմայական հակադրություններով և խայտաբղետ բուսականության (հատկապես ալպյան) փարթամությամբ ներկայացնում է բնական բազմազանության յուրահատուկ մի ներդաշնակություն:

Հայաստանի բնական սահմանները հասնում են մինչև այնտեղ, ուր այս բնորոշիչ ներդաշնակությունն աչքի է զարնում:

Կան դժվարություններ և դրանք ծագում են այն տեղերը, ուր այս ներդաշնակությունը պայմանավորող բնագծերը կամ աղտվում են կամ խառնվում շրջակա երկրների բնության երանգներին:

Այդ դժվարությունները շեշտվում են հատկապես արևելքում և արևմուտքում և առաջին հերթին պայմանավորվում են ջրային որոշ երակների ընթացքով: Որևէ բարձրավանդակի բնական սահմաններն ամենահատուկ կերպով որոշում են լեռնաշղթաները և գետերը: Նշանակալից է, որ մեր երկրի բարձրագույն սարահարթը և գլխավոր ջրամբարը տեղագրորեն նույնանում են Բարձր Հայքում:

Սակայն այստեղից բխող եփրատն ու Արաքսը հակահոս իրենց ընթացքով Բարձրավանդակի ներքին մարզում պառակտիչ դեր են խաղում, իսկ դրսից՝ լրիվ կերպով չեն եզրավորում նրա սահմանները: Ավելի ապերախտ դեր է խաղում նույն ջրամբարից բխող ձորոխը, որ Սպերի մոտից աստիճանաբար դեպի հյուսիս հակվելով ի վերջո բռնում է շեշտված հյուսիսընթաց ուղղություն և դուրս գալիս բարձրավանդակից, գլանալով Հայաստանին բնական ելք և սահմանագծում՝ Սև ծովի վրա: Շփոթ է ստեղծում և

Կուրը, որի աղբյուրները նույնպես կապ ունեն Բարձր Հայքի մեծ ջրամբարի հետ: Հայկական մեծ գետերին հատուկ արևելյան կամ արևմտյան ընթացքից շուտ խոտորելով՝ Կուրը շտապում է հակվել դեպի հյուսիս և Զավախքը Հայաստանի ու Վրաստանի միջև վիճելի դարձնելով՝ ստանում է զուտ վրացական գետի բնույթ, ապա թեքվելով դեպի հարավ՝ իրամյն ընդունելու կետից բռնում է ուղղորոշ արևելյան ընթացք և սկսում բնօրեն սահմանագծել Հայկական Բարձրավանդակի հյուսիսը:

Ուղղընթաց են Հարավային Հայաստանի (Տավրոսի) ջրամբարից սնվող գետերը (Արևմտյան և Արևելյան Տիգրիսներ): Դրանք էլ, սակայն, լրիվ սահմանագծում չեն ընծայում: Արևմտյան Տիգրիսը, որ կրում է նաև «Արղնի ջուր» անունը, վերին հոսանքում բռնում է հարավահակ ուղղութիւն և երկրի բնական սահմանագծման նպաստելու փոխարեն՝ ներքուստ պառակտում է նրա բնութիւնը: Տիգրանակերտի հարավից միայն նա ստանում է արևելյան ուղղութիւն և համեմատաբար հաջող կերպով դառնում է եգերական գետ, չնայած որ բարձրավանդակի բնութիւն գծերը թափանցում են նրա աջ ափից այն կողմը: Դրա հանդեպ՝ Արևելյան Տիգրիսը (Ջերմ, Բոհդան) վայրագ իր ընթացքով և ահռելի կիրճերով պարզապես կտրում է Հայաստանի բնութիւն պատկանող Կորդվաց լեռնաշխարհը և դյուրութիւն ընծայում Զաբին և սրա օժանդակներին՝ այդ լեռնավայրը կապել Ասորեստանի կամ վիճելի դարձնել Հայաստանի և Միջագետքի միջև: Հետաքրքրական է, որ Արևելյան Տիգրիսին Քսենոփոնը տալիս է «Կենտրիտէս» անունը, որն, ըստ Մարքվարտի, ծագում է հայերեն «կտրիչ» բառից և համապատասխանում է այս գետի Հայաստանն ազգագրորեն «կարգուի»ների, որով՝ քրդերի աշխարհից կտրող, բաժանող դերին:

Շատ ավելի բարդ է Կապուտան լճի և սրա ավազանի պարագան: Մինչ այս լիճն իր երկրաբանական ծագումով պատկանում է Հայաստանին, նրա ավազանի այլևայլ մասերում, ինչպես Աջի գետի հովտում, հաճախ իրանական բնութիւն գծերը շա՛տ ավելի ազդու են: Մյուս կողմից նշանակալից է, որ Կապուտանի ավազանի և իրանական Ամարդոս գետի (Կըզըլ-Ուզուն) ջրբաժան գոտին կազմող Սոհուն և Վազբուշ լեռնաշղթաները միայն բնօրեն հարմար կերպով սահմանագծում են Հայկական Բարձրավանդակին

ընդդեմ Իրանի:

Մյուս կողմից իրանական Ջազրոսն իր ցուուկը խրուում Կապուտանի և Հայկական Տավրոսի միջև, իսկ իրանական Հյուսիսային գոտու բազուկները Գիլան - Մազանդարանից երկարելով՝ ձգտում են հարավից Հյուսիս կտրել արևելյան Ատրպատականը և հասնել Արաքսի ավազանը: Հենց այս իրողություններն են պատճառը, որ Հայկական Բարձրավանդակի և Իրանական սարահարթի սահմանագծումն ա՛յնքան դժվարանում է: Իրականում Ատրպատականը այն մարզն է, որ Հայկական Բարձրավանդակի և Իրանի բնագծերը իրար խաչաձևելով, չեզոքացնում են, և իբր փոխանցման գոտի ծառայող այս երկրին՝ ինքնուրույնություն չափանշանով պատճառում, որքան էլ նրա խարխիսը կազմող լեռնագոտիներից երկուսը՝ հարավից Հյուսիս երկարողները, Իրանական սարահարթի երկու պատերի շարունակությունն են, իսկ արևմուտքից արևելք տարածվող շղթաները՝ հայկական լեռների մասերը:

Ինչպես տեսնվում է, ջրագրական իրականություն պատճառած դժվարություններին միանում են լեռնագրականները: Եթե Ատրպատականում Իրանական լեռնագոտու Հյուսիսային պատը Հայկ. Կովկասին է զարկվում, հարավայինը՝ Հայկական Տավրոսին, ապա ձորոխի ստորին հոսանքի և Կուրի ակունքների մարզերում էլ իրար են խառնվում Հայկական Կովկասի, Մեծարանցի, Պոնտյան լեռների և Ռիոնի հովիտները հարավից եզերող շղթաների բազուկները, որոնք որքան էլ երկրաբանորեն Հայկական Բարձրավանդակին խորթ չեն, կլիմայական և բուսական առանձնահատկություններով, սակայն, տարբերվում են նրանից: Նույնանման դժվարություններ կան նաև Եփրատի Փինկյանի ծունկից մինչև ձորոխի շրջանը, ուր Եփրատի և փոքրասիական Գայլ գետի (Լիկոս) ջրբաժան գոտիները կազմող, ձորոխի մարզը Պոնտոսից բաժանող և Անտիտավրոսի, Պոնտյան ու Բարձր Հայքի լեռներին պատկանող շղթաները մոլեգնորեն խաչաձևում են իրար: Վերջապես, չփոթ կա Տավրոսը պատուող Եփրատի և Արևելյան Տիգրիսի ավազանի հարավ-արևմտյան մասը կազմող մարզի միջև, ուր Հայկական Տավրոսի հուժկու բազուկները Միջագետքի դռների մոտ տեղի են տալիս լեռնաբլուրների:

Շփոթաստեղծ դեր են խաղում և՛ կիրճերը՝ բարձրավանդակի ներքին հովիտների և եզերական հարթաշխարհների բնական դռնե-

րը: Եթե մի կողմից մեծ գետերը բարձրավանդակի բնության գծերը տանում են դեպի շրջակա աշխարհները, վերջիններն էլ իրենց նկարագրի որոշ հատկությունները հոսանքների հունները կազմող կիրճերի հետ մխրճում են դեպի երկրի ներքին հովիտները:

Տիգրիսի օժանդակների հետ Միջագետքն իրեն հիշեցնել է տալիս մինչև Բաղեշի կոնքը և անգամ զգալի դառնում Տարոնի դուռնի մոտ, Գրգուռի ստորոտը: Տիգրանակերտի դաշտում ավելի ցայտուն կերպով աչքի են գարկում միջագետյան որոշ գծեր, որոնք նույնիսկ համառում են մոտենալ Արածանու հովիտներին: Արաքսի ատրպատականյան օժանդակների շնորհիվ, իրանական բնության մեկ քանի երանգները թափանցում են մինչև Արարատի ստորոտը: Բնորոշիչ է մանավանդ բարձրավանդակի կենտրոնական հովիտը, այնքան հետաքրքրորեն Հայաստանի բնության երկու ամենահիշատակելի հրաբխային զանգվածների՝ Մասիս և Արագած, միջև ընդլայնված Արարատյան դաշտը, ուր Արաքսի ափերը Բարձր Հայքի սարավանդային և նույն գետի ստորին հոսանքը կազմող Մուխանքի դաշտային-անապատային բնության գծերը իրար են խառնվում: Ավելորդ է հիշել Կապուտանի ավազանի մասին, ուր հայաստանյան և իրանական բնության ազդեցությունները, գրեթե, հավասարազոր են: Վերջապես Կուրի և ձորոխի օժանդակների միջոցով Կովկասի և Պոնտոսի անտառային բնությունն ավելի քան տպավորիչ կերպով աչքի է ընկնում Հյուսիսային Հայաստանի այլևայլ մասերում, հատկապես Լոռիում և Մեծրանց լեռներում:

Որքան էլ այս իրականություն մանրամասնությունները խանգարում են բարձրավանդակի բնօրեն հատու սահմանագծմանը (և հենց այդ իրականություններն են մեր պատմաքաղաքական ճակատագրի բնական-առարկայական պատճառները), այնուամենայնիվ, պակաս նշանակալից չեն այն առանձնահատկությունները, որոնց շնորհիվ մեր երկիրը իր ինքնուրույն կերպարանքով զատորոշվում է շրջակա աշխարհներից: Ծանոթանա՛նք դրանցից մի քանիսին:

Ա) Հայաստանն արտաքուստ կենտրոնացյալ մի բարձրավանդակ է, սեպորեն իջնող պատերով, որոնք հսկա տանիքների պես կարկառվում են հարավից Միջագետյան հարթաշխարհի, հյուսիսից՝ Ռիոն-Կուրի հովիտների դեմ: Իր բարձր դիրքը Հայաս-

տանը շեշտում է նաև արևմուտքում՝ փոքր-ասիական, արևելքում՝ Իրանական սարահարթերի նկատմամբ: Ըստ այսմ՝ Հայկական Բարձրավանդակի սահմանները հասնում են մինչև ա՛յն կետերը, ուր այս ցցվածքը նկատելի է:

- Բ) Արտաքուստ կենտրոնացյալ թվացող մեր բարձրավանդակի լեռները ներքուստ բաժանվում են արևելքից արևմուտք երկարող չորս գոտիների, որոնք կազմում են Հայաստանի բնության ողնաշարը: Հայաստանը, անառարկելիորեն, տարածվում է մինչև ա՛յն բոլոր կետերը, ուր հասնում են այս գոտիների բազուկները:
- Գ) Երկրի լեռնազբաղական իրականությունների պարտադրանքով Հայկական Բարձրավանդակի մայր ջրերակները հոսում են ընդհանրապես արևելքից արևմուտք կամ արևմուտքից արևելք: Բոլոր այն վայրերը, ուր մեծ գետերը պահում են այս ուղղությունները, անառարկելիորեն պատկանում են Հայաստանին, իսկ ուր նրանք ստանում են հյուսիսային կամ հարավային ընթացք, այնտեղ վերջանում է Հայաստանը:
- Դ) Դարձյալ, այս մայր գետերի բարձրավանդակային օժանդակները հոսում են ընդհանրապես հյուսիսից հարավ կամ հարավից հյուսիս: Բոլոր այն դեպքերում, երբ սրանք խոտորվում են այս ընթացքից և բարձրավանդակից իջնելով նաև դաշտային ջրերակների բնույթ ստանում, իրենց այս վերջին հոսներում Հայաստանի բնությունը դարձնում են կասկածելի լինելու աստիճանի աղոտ:
- Ե) Գետերը և ո՛չ մեկ դեպքում բարձրավանդակին հարազատ արևելահակ և արևմտահակ հոսանքով չեն ուղղվում դեպի իրենց ավազանները, որով և Հայաստանը չեն առաջնորդում դեպի ծով: Անգամ Արաքսը, որ իր միջին հոսանքում նախ հարավահակ և ապա հյուսիսահակ հոսանքով մի աղեղ է քաշում Հայկական Կովկասի շուրջը, ի վերջո անցնում է այնպիսի մի մարզով, որ իր անապատային բնությամբ, մակերեսի խոնարհությունը և կլիմայով հակադրություն մեջ լինելով բարձրավանդակի հետ, փաստորեն խանգարում է Հայաստանի բնական ելքը Կասպից ծովի վրա: Մյուս կողմից, Պարխարի հուժկու կողերն իրենց դեմ մաքառող ձորոխին Հայաստանից դուրս վանելուց հետո միայն, կարելիություն են տալիս՝ նետ-

վել Սև ծովի գերկը: Իսկ Հայաստանի բնության ամենահարազատ գետ Արածանու ահագին ջրով ուռճացող Եփրատի՝ Տավրոսը պատռելու և Միջերկրական թափվելու բոլոր փորձերը, իրենց ահռելի կատաղության մեջ մնում են ապարդյուն: Իջնելով Միջագետք՝ Եփրատն իրեն վիճակում է անապատային տխուր գետի, իսկ Հայաստանին՝ անծով աշխարհի ճակատագիրը: Հայկական Բարձրավանդակը, էպոս, բնական ելք չունի դեպի ծովերը և հայերը՝ կարծես մխիթարվելու համար, երկրի մի շարք լճերին տվել են «ծով» տիտղոսը:

Ասվեց, որ Հայկական Բարձրավանդակի բնական սահմանները հասնում են մինչև այն տեղերը, ուր դեռ աչքի է զարկում լեռնաջրագրական առանձնահատկությունների ներգաշնակությունը:

Ըստ այսմ՝ մեր երկրի սահմաններն են.

Արևելքից՝ Արաքսի աղեղը և Արաքսի ու Կապուտանի ջրբաժան գծերը (և միայն հարաբերականորեն՝ Կասպից ծովը և Կապուտան-Ամարգոսի ջրբաշխ գոտին):

Հարավից՝ Տիգրիսի, Զապի և Խապուրի ջրբաշխական գծերը (և միայն հարաբերականորեն՝ Զաբի ավազանը):

Արևմուտքից՝ Եփրատը՝ Տավրոսից դուրս գալու կետից մինչև Պինգանի ծունկը և այստեղից՝ Եփրատ, Ալիս, Գայլ և Ճորոխ գետերի ջրբաշխական աղեղնագիծը (և միայն հարաբերականորեն՝ Եփրատի Պյունամոսի ջրբաժան գիծը):

Հյուսիսից՝ Ճորոխի, Ռիոնի և Կուրի ջրբաժան մարզը, Խրամ գետը և սրա Կուրին միանալու կետից, այս վերջին գետը:

Հայկական Բարձրավանդակը, լայնագույն իմաստով, այսինքն՝ հարաբերականորեն իրեն պատկանող մարզերով, ունի շուրջ 380,000 քմ² տարածություն:

Բուն բարձրավանդակը, այսինքն՝ այն երկիրը, որ հավելվածական մասերի կտրումով կրկին կպահե բնական իր ամբողջականությունը, տարածվում է Տավրոսը կտրող Եփրատի, Հայկական Կովկասն աղեղող Արաքսի, Ճորոխի, Զաբի, Կապուտանի ավազանի, Կուրի և գույգ Տիգրիսների միջև:

Սա է հայոց բնօրեն անհատանելի և հավիտենական Հայրենիքը, լեռնազրորեն համախմբված Արարատ կենտրոնական բավիղի, ջրագրորեն՝ սրա բազուկները հանդիսացող գոտիների աղբյուրների (առավելապես Բարձր Հայքի ջրամբարի) շուրջը: